ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2012թ. N 308

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սահմանապահների փողոցի N114 տան բնակիչ Երեմ Հարությունյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Երեմ Հարությունյանին հատկացնել 60000 /վաթսուն հազար/ դրամ միանվագ օգնություն
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ